

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԻՐԱՔԻ ՄԵՋ ԳՈՐԾԱԴՐՈՒՌՂ ՍՊԱՆԴԸ, ՅԱՏԿԱՊԵՍ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ԴԵՄ



Լահուտ եւ Արիտի

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երկր Պապա- տայի մէջ ընդունեց արտաքին գործոց եւ ար- տերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտը, որուն հետ քննարկեց Իրա- քի դէմ ամերիկեացիներու կողմէն արտադրու- ինչպէս նաեւ անոր նկատմամբ շրջան ընդ- տարբեր կեցումներն ու հակադէմոստրացի- աները:

Նախագահ Լահուտ խստի դատապարտեց Պաղատի վրայ ամերիկեան ուժերու կողմէ շարունակուող ռմբակոծումը, որ պատճառած է բազմաթիւ զոհեր, որոնց մէջ՝ ծերեր եւ մանուկ- ներ, ինչպէս նաեւ իրենց գրասենեակներուն մէջ աշխատող արաբ թէ օտար թղթակիցներ ու լրագրողներ:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ տեղե- կատուութեան նախարար Դապի Արիտին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կա- ցութիւնը եւ լիբանանեան միասնականութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը:

Արիտի յայտնեց նաեւ, որ քննարկումի առար- կայ դարձած են Իրաքի դէմ ամերիկեան բռնա- րարքները: Ան աւելցուց, որ Պաղատի մէջ լրագրողներու կեդրոնը թիրախ դարձնելու ամերիկեան արարքը ցոյց կու տայ, որ այն ապա- տութիւնը, որուն մասին կը խօսին Միացեալ Նահանգներ՝ բոլորը սպաննելու ապատու- թիւնն է, յատկապէս լրագրողներուն ու թղթա- կիցներուն, անոնց արգիլելու համար Պաղատ- տի մէջ գործուող շարժերուն նկարները ամ- բողջ աշխարհին ցոյց տալու առաքելութիւնը:

ՄԱՀԱՉԴ

Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլեճը կը գուժէ իր վարժարանի խնամակալութեան երկար տա- ռիներու վաստակաշատ նախկին անդամ՝

ՅԱԿՈՒ ՊՈՅԱԾԵԱՆԻ

մահը:

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը կը գուժէ իր շրջանի հաւատարմ անդամներէն՝

ՅԱԿՈՒ ՊՈՅԱԾԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 2 Ապրիլ 2003ից, Լոս Անճելէսի մէջ:

ՄԱՀԱՉԴ

Տիկին Անի Պոյաճեան եւ դուստրը՝ Սարին Տէր եւ տիկին Ռազմիկ եւ Սիրա Արապեան եւ

Տէր եւ տիկին Սերժ եւ Սառա Պոյաճեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Սեպուհ եւ Ալիս Պոյաճեան եւ

Տիկին Սիրան Նահապետեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Ժիրայր եւ Յովինն Խաչատուրեան եւ

Տէր եւ տիկին Ռոյան եւ Թագի Լուէնան եւ զաւակը Տէր եւ տիկին Բաճիկի եւ Իսմայիլ Պոյաճեան

Տիար Վիգէն Պոյաճեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Վարուժ եւ Ալի Աշճեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Յուսէն Բաճեան եւ զաւակուհի

եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Տիար, մեծ Տիար, եղբոր եւ Հարազատին՝

ՅԱԿՈՒ ՊՈՅԱԾԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէյրուս, 1936ից)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 2 Ապրիլ 2003ին, Լոս Անճելէսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուշարկուցութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 10 Ապրիլ, կէսօրէ առաջ ժա- մը 11:00ին, Forest Lawn Hollywood Hills գերեզմա- նատան Church of the Hills մատարան մէջ:

- Ներկայ ընդունիլ իրրեւ մահազգ:
• Լիբանանի մէջ ցաւակցութիւնները կ'ընդուն- ուին հանգուցեալին բոլոր տէր եւ տիկին ժիրայր եւ Յովինն Խաչատուրեանի բնակարանը, Ռապուէ, «Արճալ» հիւանդանոցի շրջան, Պոլստուգեան շէնք, հեռաձայն՝ 04 - 406297 եւ 03 - 688114, Ուրբաթ 11 եւ Շաբաթ 12 Ապրիլից:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՌԻԱՏԻ ՄԵՋ ԲՆՆԱՐԿԵՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, երկ Ահառի մէջ հանդիպումներ ունե- ցաւ սեփուցի պետական եւ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, քննարկելով շրջանային կացութիւնը եւ Պէյրուս - Ռիատ երկկողմանի յարաբերութիւնները:

Վարչապետ Հարիրի այցելեց պաշտպանութեան նախարար Սուլթան Պըն Ապտէլ Ապիպի, որուն հետ քննարկեց լիբանանեան պետական երկ- կողմանի յարաբերութիւնները եւ իրաքեան պատերազմի նորագոյն վարձագումները:

Աւելի ուշ, վարչապետ Հարիրի հանդիպում մը ունեցաւ նաեւ Սեփու- տական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պըն Ապտէլ Ապիպի հետ: Քննարկուեցան Լիբանան - Սեփուտական Արաբիա յարաբերու- թիւնները բարելաւելու հեռանկարները եւ շրջանային իրադարձութիւն- ները:

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Քուեյթի արտաքին գործոց նախարար շէյխ Սապահ Ահմէտ Սապահի հետ, որուն հետ քննարկեց Քուեյթի կացութիւնը:

Վարչապետ Հարիրի վերահաստատեց, որ լիբանանեան պետութեան յարաբերութիւնները երբեք պիտի չվնասուին, ակնարկելով վերջին շրջա- նին այս իմաստով արձանագրուած հարցերուն եւ պայմանութիւննե- րուն:

ՊՐՐԻ ԵՒ ԱՄԻՆ ԺԵՄԱՅԷԼ ԲՆՆԱՐԿԵՑԻՆ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Խորհրդարանի նա- խագահ Նեպիի Պրրի երկ իր գրասենեա- կին մէջ ընդունեց նախկին նախագահ Ամին Ժեմայէլը, ընկե- րակցութեամբ երես- փոխան Փիեռ Ժեմա- յիլի:

Հանդիպումէն ետք Ա. Ժեմայէլ ըսաւ, որ քննարկուած են Իրա- քի դէմ պատերազմին կայուն ծրագրեր, ինչպէս նաեւ ներքին լիբանանեան խնդիր- ներ, յատկապէս Լիբա- նան - Սուրիա միաց- եալ կեցումները որդե- գրումէն ետք, ինչ որ ծառայած է նաեւ ներ- քին միասնականու- թեան եւ երկիօսու- թեան մթնոլորտը քա- ջալեցելու:

Ժեմայէլ նկատել տուաւ, որ երկրին մէջ տիրող ներկայ մթնո- լորտը օրինակելի է եւ բոլոր կողմերուն կը յարմար: Ան կոչ ուղ- դեց ամրապնդելու ապ- զային շարքերը՝ լաւա- գոյնս դիմագրաւելու համար ներկայ մար- տահրաւէրները, եւ գործակցելու Սուրիոյ հետ:

Պրրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէն, որուն հետ քննարկեց շրջանային վերջին իրա- դարձութիւնները եւ իրա- քի դէմ պատերազմին պարզացումները:

Լը Քուրթիէ նկատել տուաւ, որ Իրաքի կա- ցութիւնը ցաւալի է եւ ողբերգական: Ան աւելցուց, որ Իրաք պէտք է պահէ իր գե- ռիշխանութիւնը՝ եւ չէնթարկուի բաժա- նուումներու, որովհե- տեւ նախկին անկախ- նութիւնը հիմնական է շրջանի ընդհանուր քաղաքականութեան համար:

Լը Քուրթիէ ընդգ- ծեց, որ Ֆրանսա չի փափաքիր, որ Միջին Արեւելքի մէջ հարցե- րը բարդանան:

Պրրիի այցելուե- լին եղան նաեւ Լիբա- նանի մէջ Հոլանտայի դեսպան Ժան Փիթ Բլիուիկ, կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մրատ, երես- փոխաններ Միխայիլ Տահէր, Ալի Պեպպի եւ Ժան Օպէյտ, ինչպէս նաեւ «Միսրլ Իսթ» օդանաւային ընկե- րութեան մէկ պատ- լիրակուհիները, գլխա- տրութեամբ վարչա- կան խորհուրդի նա- խագահ Մոհամէտ Հուրի:

ՓՈԽ ՎԱՐՉԱՊԵՏ ԻՍԱՄ ՖԱՐԵՍ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԵ ԻՐԱՔԵԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս երկ քննա- դատեց իրաքեան վարչակարգն ու ղեկավա- րութիւնը, յայտնելով, որ Քուեյթի վրայ կատա- րած իր պատերազմն էտք ան ոչ մէկ դրական նախաձեռնութեան դիմած է ոչ միջազգային ընտանիքին հանդէպ, ոչ իր դրացի երկիրնե- րուն հետ յարաբերութիւնները բարելաւելու իմաստով:

Ֆարէս շեշտեց, սակայն, որ ինք անձնապէս դէմ է ամերիկեան պատերազմին, նշելով, որ կարելի էր զայն շրջանցել:

Միւս կողմէ, Ֆարէս ընդգծեց, որ լիբանան- եան կառավարութիւնը հանրապետութեան նա- խագահով, ան ժողովուրդով յատուկ «սէր» կը տածեն Քուեյթի հանդէպ:

Ան աւելցուց, որ Իրաք 12 տարուան ընթացքին ոչ մէկ նախաձեռնութեան դիմած է բարեկար- գելու համար իր վարչակարգը: Ան աւելցուց նաեւ, որ կաակած է վեր էր, թէ Միացեալ Նա- հանգներ պիտի յաղթեն պատերազմը:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՌԻՆԿՆԴԻՐՆԵՐՈՒՆ

Առաջարկներ ունի՞ք: Նոր գաղափար- ցն՞ք: Ծա՞տ լաւ: Ձեր ցեղանկները դրկեցե՞ք voicevan@inco.com.lb հասցեին:

ՎՃԱՐԵԼՈՎ «ԱԳՐԱԿ»Ի ԿԱՐԵԿԱՆ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՅԷ՞Ր «ԱԳՐԱԿ»ԻՆ

Վճարելով «Ագրակ»ի տարեկան բաժանորդագինը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ «Երկիր» շաբաթաթերթը, ամսական յաւելուածներ՝ «Պատկեր-Սպորտ»-ը, «Անահիտ»-ը, «Նաւասարդ»-ը ու «Ագրակ» ամսաթերթը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՅԷ՞Ր «ԱԶԳԱԿ»ԻՆ:

Շեռաձայնեցե՛ք՝ 01/260115, 01/258526, 01/241274 Fax : 01/258529 E-mail: aztag@inco.com.lb Website: www.aztagdaily.com

Logos for various media outlets: ԱԶԳԱԿ, ԱՐԿԻՐ, ԱԶԳԱԿ, ԱՆԱՃԻՏ, ՊՁՏԻԿ-ԱՂՏԻԿ, ՆԱԽԱՐԱՐ, ԱԶԳԱԿ.

ՆՇԱՐՍԵՆ ԵՏԵՂԵԿԱՏՈՒՌԹԵԱՆ ՄԱՐՉԸ ԱՊՐԵՑԱՒ ՍԵՒ ՕՐ ՄԸ «ՄԵՂԱՒՈՐ»Ը ԴԱՐՉԵԱԼ ԻՐԱՔԵՆ Է

Երկ սեւ օր մը սարեցաւ լրատուական - տեղեկատուական մարզը, երբ երեք թղթա- կիցներ Պաղատի մէջ գոհ ցացին ամե- րիկեան ռմբակոծումներուն, հինգ ուրիշ- ներ վիրաւորուեցան (տարբեր ազգութիւն- ներէ), ինչպէս նաեւ «Մանար»ի, «Ռոյ- թըրպ»ի եւ «Ապու Տապի»ի գրասենեակնե- րը փուլ եկան: Սակայն լրագրողներու բուն սպանողը կատարուեցաւ «Պաղատին» պանդոկին մէջ, ուր կ'իջեանի օտար լրա- գրողներու մեծամասնութիւնը:

Այս ցաւալի երեւոյթը կարելի է անշուշտ տարբեր մտեցումներով ընկալել: Մենք, իբրեւ լրատուագիր, իբրեւ պաշտօնակից- ներ, բնականաբար շատ աւելի վզացական կը մտենանք հարցին, սակայն տրամա- բանութիւնը կը թելադրէ գերակշռելի պա- ցականութիւնը եւ մտածել, որ ի վերջոյ պա- տերազմ է եւ ի՞նչ է տարբերութիւնը այն բազմաթիւ քաղաքայիններուն (ծեր, մա- նուկ, կին, երեխայ) եւ լրագրողներուն մի- ջեւ: Ինչո՞ւ աշխարհ այդքան իրար չան- ցաւ, երբ առօրեայ դրութեամբ պատկերա- փիռի կայաններէն անպատմելի տեսա- բաններու ականատես եղաւ ամբողջ քսան օր, բայց երկ Լոնտոնէն մինչեւ Պրիւքսել ու անկէ մինչեւ Պէյրութ եւ Հարաւային Ամե- րիկա ան տակնուվրայ եղաւ ի տես քանի մը լրագրողի մահուան: Իսկապէս տգեղ ու անարդար է այս խորակախնդրութիւնը մարդ- կային ընկերութեան հաշուին:

Պատերազմի ընթացքին կարելի չէ յար- գել անգիր կամ նոյնիսկ գրաւոր օրէնքնե- րը ինչ կը վերաբերի տեղեկատուական, բժշկական, մարդասիրական կազմակեր- պութեանց մարզերուն եւ մասամբ նորին: Այլ խօսքով, կարելի չէ տարբերել բժիշկը, լրագրողը, ատղձագործը, երկարագործը, շարքը երկար է: Կոնի ընթացքին պիտու- րին տրամաբանութիւնը հասկնալիօրէն վրիպած կ'ըլլայ. ան կը կրակէ անխայ: Բայց մենք, ինչպէս կ'ըլլայ համար հաւասարա- պէս պէտք է ցաւինք, լրագրող ըլլայ ան թէ ոչ:

Միւս կողմէ, սակայն, ամերիկացիք դժբախտաբար կը շարունակեն իրենց գրգռիչ յայտարարութիւնները, ամէն օր քիչ մը աւելի ապացուցելով իրենց ծանծաղ տրամաբանութիւնը:

Այսպէս, ԿՕՐ. Թոմի Ֆրանքս, ինչպէս նաեւ Փենթաօնոն պաշտօնապէս յայտարա- րեցին, թէ լրագրողներուն մահուան պատ- ճառը իրաքեան կողմէն է եղեր, որ չէ կրցած լաւապէս ապահովել անոնց կեցութիւնը, ինչպէս նաեւ ամերիկեան հրասայլը «միայն» մէկ ռումբ արձակած է «Պաղա- տին» պանդոկին վրայ, ուր կը գտնուէին լրագրողները, որովհետեւ պանդոկին տա- նիքէն իրաքի արձակապէս մը կը կրակէր...

Նախնական եւ շատ աժան այս բացատ- րութիւնը անընդունելի է երկու պատճա- րով: Եթէ նոյնիսկ պահ մը հաւատանք, որ պանդոկին պարագային արձակապէսն էր պատճառը, հապա ի՞նչ էր «Ռոյթըրպ»ի, «Ապու Տապի»ի կամ «Ժապիրա»ի գրասեն- եակներուն ռմբակոծման պատճառը: Հո՞ւս ալ արձակապէսներ թաքնուած էին:

Աւելի՛ն. ամերիկեան տրամաբանու- թեամբ, ուրեմն եթէ հիւանդանոցի մը կամ մանկապարտէպի մը տանիքն ալ արձակա- պէս կայ, հրասայլը չի վարանիր հիւանդ- ներով կամ մանուկներով յեցուն շէնքերը եւ վար առնել: Ահաւասիկ անուղղակի վտանգաւոր եւ շովինիսթ խոստովանու- թիւն մը, (եւ ըսել, որ ամերիկացիք Իրաք ներխուժեցին յանուն ժողովրդավարու- թեան...), որ կը օրհնար արձակապէսն եւ տե- դաւոր նկատելու ամերիկեան անիմաստ հալածախտէն, որ վերջին հաշուով փաս- տօրէն կը դառնայ նոյնիսկ ամերիկացի- ներուն դէմ, պարզապէս որովհետեւ անոնք նախապէս լաւ ձեռով չեն սերտեր իրենց յայտարարութիւնները, որոնք այնքան կա- րելոր են:

ՀՐԱՉ ՎԱՐՉԱՊԵՏԵԱՆ

BALTAYAN ELECTRONIC advertisement featuring various electronic products like cameras, mobile phones, and audio equipment.

ԲԱՆԵՍԱՒՈՐՈՒԱԾՈՒ Եր եւ տիկին Շամբիկ եւ Լիւսի Գարայեան բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ ԺԱԸ 8 Ապրիլ 2003 Տուպայ ԿՈՒՉՈՒԻ ԲԵՏԱՊԻ Խնճորի ըն- տիր բացալս արտադրող ԶԵ- ՇԻՇԵԱՆ հաստատութիւնը Լիբանանի շուկային համար կը փնտնէ երկրային ցուցիչ- ցրուիչ ընկերութիւն մը, դի- մել՝ հեռ. 02/93/524255 քիւն (Բեսալ):

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՐՏԱԳԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ, 4 Ապրիլ 2003ին սկսեալ Լիբանանի մէջ գործադրութեան դրուեցալ ինքնաշարժի պարտադիր ապահովագրութեան օրէնքը:

Յառաջիկայ շաբաթներուն բնականաբար օրէնքին կապուած որոշ լուսաբանութիւններ պիտի կատարուին: Մինչեւ օրս հաւաքուած տեղեկութիւնները կարելի է բանաձեւել հետեւեալ կէտերուն մէջ:

1.- Մինչեւ Սեպտեմբեր 2003, Ներքին Ապահովութեան Ուժերը խիստ միջոցառումներով պիտի չհսկեն օրէնքին գործադրութեան:

2.- Մինչ այդ, ինքնաշարժի արձանագրութեան եւ մեքանիքի վճարման ժամանակ պէտք է ցոյց տալ պարտադիր ապահովութեան համաձայնագիրին պատճէնը: Տեղին է յիշել, թէ առ այժմ պարտադիր ապահովագրութեան ժամանակամիջոցը մեքանիքի վճարման ժամանակ պէտք է նուազագոյնը տասը ամիս ըլլայ:

Բնականաբար օրէնքի այս բաժինը շփոթի կը մատնէ արդէն ապահովագրութիւն ունեցողներու մօտ: Սակայն, ինքնաշարժներու պարտադիր ապահովագրութեան ազգային հաստատութիւնը այս հարցով հանդիպում մը պիտի ունենայ նախարար Պասէլ Ֆլէյխանի հետ, որոշ բարեփոխութիւններ ձեռք ձգելու համար:

3.- Պետութեան կողմէ պարտադիր ապահովագրութեան պայմանը կը ներառնէ միայն արեան գին 750 միլիոն լ. ո.:

Մինչ այդ, նախապէս ապահովագրութիւն ունեցողները, եթէ վերոյիշեալ սահմանը կամ աւելի ունին, տուեալ ընկերութեան պարտադիր ապահովագրութեան համաձայնագիր մը կը ստանան եւ կը կցեն իրենց ապահովագրութեան համաձայնագիրին:

4.- Պետութեան կողմէ ճշդուած եւ յայտարարուած սակագոյրը 60 հազար լ.ո.էն 95 հազար լ.ո. է, որ միայն արեան գինը (մարդկային վնաս) կ'ապահովագրէ նոր պայմաններով:

Մինչ այդ, ապահովագրութեան ընկերութիւններու կողմէ ցարդ վաճառած ինքնաշարժի ապահովագրութիւնները իրենց պայմաններուն մէջ կը ներառնեն արեան եւ նիւթական վնասները, ինչպէս նաեւ ինքնաշարժի խանգարման կամ արկածի պարագային փոխադրութիւնը:

Պետութեան որոշումով եւ ինքնաշարժներու պարտադիր ապահովագրութեան հաստատութեան կազմակերպութեամբ յառաջիկայ շաբաթներուն հրապարակ պիտի իջնեն ինքնաշարժներուն վրայ գետեղուող յատուկ պիտակներ:

Վերջապէս, կը մատնանշենք, որ քսանհինգ տարի ետք պետութեան որդեգրած քայլը կը սահմանափակուի միայն մարդկային վնասներու ապահովագրութեամբ եւ ոչ թէ նիւթական վնասներու հատուցումով:

Կը յուսանք, որ նախապէս ապահովագրուողները յաւելեալ ծախսի մը առջեւ չգտնուին: Բնականաբար յառաջիկայ շաբաթներուն այս հարցերը աւելի յստակ հունի մէջ կը դրուին եւ միանգամընդմիջ տարուք լուծումներու կը հասնին:

3. L.

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ նախարար Վահ Արիտի, իմբագիրներու եւ լրագրողներու սենտիքաները, Տեղեկատուութեան Ազգային Խորհուրդը, ինչպէս նաեւ տեղեկատուութեան եւ սենտիքայական խորհուրդներ երէկ դատաւարտեցին ամերիկեան եւ բրիտանական ուժերուն կողմէ Պաղտատի մէջ արաբ թէ օտար լրագրողներու կեցութեան վայրը ոմբակոծելու արարքը: Նշեալ հակապրոպագանդներով, անոնք շեշտեցին, որ Իրաքի դէմ պատերազմը առաջնորդող դաշնակից ուժերը սկսած են «նեղանալ» տեղեկատուութեան ապատուծնէն, որ հիմնական ապատուծիւնն է ժողովրդավարական կարգերուն մէջ:

● ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Ղասսան Սալամէ երէկ հաւաստեց, որ արաբները ամէն ժամանակ աւելի հիմն է, որ պէտք ունին Արաբական Լիգային, որպէսզի ան կասեցընէ արաբական շարքերուն մէջ իշխող եւ աճող խախտումներու հոսանքը, վերջ տալով իրարու հանդէպ թշնամական որեւէ ծրագրի: Ան աւելցուց, որ Մ.Նահանգները կը ջանան նոր օրէնքներ եւ վարչակարգեր հաստատել տիրանալու համար քարիւղին:

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ

Նախալլա Պուրոնու Սֆէյր պատրիարքը երէկ Պերքէի մէջ ընդունեց Հրպարակի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմի: Հանդիպումին քննարկուեցան Իրաքի դէմ ամերիկեւրիտանական պատերազմին իրադարձութիւնները, շեշտելով, թէ Իրաքի դէմ ամերիկեան բռնարարները վտանգին սկիզբն են Լիբանանին: Անոնք աւելցուցին, որ լիբանանցիները պէտք է դիմադրեն այս մարտախուրդին: Քասէմ շեշտեց, որ Հրպարակ - Պերքէ յարաբերութիւնները չեն դադրած, այլ կը շարունակուին:

● ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միջֆիթի շէյխ Մահմադ Ռաշիտ Քապպա-նի երէկ ընդունեց երեսփոխաններ Պահիա Հարի-րին, Մահմադ Եահիան եւ Ուսթի Գարիբին, որոնց հետ քննարկեց արաբական ընդհանուր իրադարձութիւնները եւ լիբանանեան տարբեր շրջաններու կարիքները:

● ԸՆԿԵՐԱՅԻՆ Ապահովագրութեան Ազգային Մատուկի ընդհանուր տնօրէն տրքք. Սոհմէտ Քարաքի երէկ յայտնեց, որ տնօրէն խորհուրդի բացակայութիւնը երբեք ծիտական ազդեցութիւն չունի ապահովագրուող քաղաքացիներուն տրուած օժանդակութիւններուն հետ: Ան աւելցուց, սակայն, որ տնօրէն խորհուրդի մէջ յայտնուած ծիտական ձեռք կ'ազդէ ապահովագրութեան ընկերութեան ծառայութեան դրութեան բարգաւաճման հղովոյթի դաշնադեցման, ինչպէս նաեւ այլ ծրագիրներու ձեռնարկումի աշխատանքին:

● ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ նախարարութեան կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը երէկ կոչ ուղղեց լիբանանցիներուն՝ զգուշանալու Մարազոյն Արեւելքի երկրները ճամբորդելէ, թաքտապի պատճառով:

Arabic header with logos: البيرق, اللؤلؤ, التمجيد, السفير, and other Arabic text.

ԻՆՉԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

8 Ապրիլի տեղական օրաթերթերը լուսարձակի տակ առած են ամերիկեան եւ բրիտանական ուժերուն ներխուժումը Պաղտատի մէջ նախագահական պալատներ, Պուշի եւ Պլէրի հանդիպումը Պելֆաթի մէջ եւ ամերիկեան պատրաստութիւնները Իրաքի գրաւումին եւ Սատամի տապալումին յաջորդող հանգրուանին:

«Նահար» գրած է, թէ ամերիկացիները մտան նախագահական գլխաւոր պալատը, «Ռաշիտ» պանդոկին շուրջ կոիւնները շարունակուեցան, իսկ Հասան Մաժիտի սպանութիւնը հետպիտէտ հաւաստի կը դառնայ: Պլէր կը փորձէ համույլի Պուշի ՄԱԿին աւելի ազդու դերակատարութիւն տալու առնչութեամբ, իսկ Գորավար Ֆրանքս Իրաք այցելեց:

Ըստ թերթին, Ռամադելու յայտարարեց. «Իրաքի նոր կառավարութիւնը պիտի հրապարակուի կարճ ժամանակ ետք, հաստատուելով, որ Ամերիկա իր տիրապետութեան եւ հսկողութեան տակ պիտի պահէ իրաքեան պաշտպանութեան նախարարութիւնն ու ինչպէս նաեւ արեւելեան սպասարկութեան ցանցը»:

Թերթը նաեւ նշած է, թէ իրաքեան ուժեր կը նահանջեն հիւսիսային ճակատէն, իսկ Ռաշիտ կը քիւրտերը կը կողմնակից ձեռքը մուտք գործել: Պուշ իսրայէլի ղեկավարութեան հետ ինչպէս կը զրոյցանալու իրաքեան վարչակարգի ճակատագիրը, իսկ Ռաշիտ կը Իրաք ուղարկեց յատուկ ղեկավար մը՝ ժամանանաւոր կառավարութեան ենթահող պատրաստելու համար:

«Անուար» նշած է, թէ ամերիկացիները կը սպառնան պիւնտրական յաւելեալ գործողութիւններ շրջապատարութեան վրայ, գրած է օրաթերթը:

«Նահար» իր ներքին էջերով գրած է, թէ փրկարար կազմակերպութիւններ անկատարական ուժերուն ներխուժումը Պաղտատի մէջ նախագահական պալատներ, Պուշի եւ Պլէրի հանդիպումը Պելֆաթի մէջ եւ ամերիկեան պատրաստութիւնները Իրաքի գրաւումին եւ Սատամի տապալումին յաջորդող հանգրուանին:

«Սաֆիր» գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկեան կառավարութիւնը կը յայտարարուի մօտ օրէն, իսկ Պլէր Պուշին կը պահանջէ ամրապնդել ՄԱԿի դերակատարութիւնը: Դամասկոս հաստատեց, թէ Պլէր Ասատի փոխանցած է, թէ ինք կը մերժէ Սուրիան թիրախակետելու երեւոյթը:

Ըստ թերթին, Քալիֆորնիոյ մէջ տեղի ունեցած հակապատերազմեան ցոյցերը կ'անշարժացնեն ամերիկեան նախագահը: «Պայրաք» գրած է, թէ ամերիկացիները տիրապետեցին նախագահական երեք պալատներուն՝ Պաղտատի դէմ անակնկալ յարձակումի մը ընթացքին: Իրաքցիները բռնուց ղեկավարութիւնը ցուցաբերեցին լուրեր շրջան կ'ընեն Հասան Մաժիտի սպանութեան մասին, նշած է օրաթերթը:

Թերթին համաձայն, Ռայս ներողութիւն խնդրեց Փուշինէն՝ Պաղտատի մէջ ռուս ղեկավարին ինքնաշարժին դէմ ոմբակոծումներուն համար:

«Ամերիկացիներուն օժանդակութեամբ, քիւրտերը կը յառաջանան դէպի Մուսուլ, իսկ Թուրքիա կը խոստանայ չմիջամտել: Բնագրաւող ուժերը կը ճեղքեն Պաղտատի ղեկավարութիւնը եւ կը գրաւեն Սատամի պալատը: Պուշ եւ Պլէր կը քննարկեն յետ Սատամեան Իրաքի կացութիւնը, փորձելով շրջանցել ՄԱԿի դերակատարութեան շուրջ տարակարծութիւնները», գրած է «Քիֆահ Արապի» օրաթերթը:

Պաղտատի նաեւ հարցին մասին «Սաֆիր» գրած է, թէ իսրայէլեան ուժերը շրջապատեցին Երուսաղէմի մէջ ներխուժման մեծագոյն գործողութիւնը: Պաղտատիցի երկու նահատակներ եւ իսրայէլացի 4 վիրաւորներ արձանագրուեցան:

ԾԱՂԿԱՉԱՐԳԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀՆԱԴԻՍԱՒՈՐ ԹԱՓՈՐ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ

Կիրակի, 13 Ապրիլ, Ծաղկազարդի տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ՛

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՍԵՂԵԱՆ
Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00
Սկիզբ Ս. պատարագի ժամը 10:00
Թափօր ժամը 10:30

Ծաղկազարդի տօնին առիթով հայ մանուկներուն ու պատանիներուն իր հայրական խօսքը պիտի ուղղէ եւ ապա վեհարանին մէջ զիրենց պիտի ընդունի՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԳՌԱԿԱՆԱՅԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Նոյն օրը կէսօրը ետք ժամը 4:00ին, տեղի պիտի ունենայ Երեկոյեան ժամերգութիւն եւ Դռնբացեցի արարողութիւն, զոր պիտի կատարէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՛

ԶԱՐԵԿ ԱՐԵ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ
Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու առաւօտեան Ս. պատարագին եւ յետմիջօրեի արարողութեան, լեցուելու համար Զրիստոսի գալստեան խորհուրդով:

ԴՌԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

«ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.»
ՄԱՐՉԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ
Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին կը սկսին
KUNG FUի մարզումները
տարիքային բաժանումներով:
Մանրամասնութեանց համար դիմել համալիրի տնօրէնութեան,
հեռ. 04 - 722902 - 3 թիւերուն:



Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուսլու պարագային:

Երբ մագութ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով **04 / 715111 - 222 - 333** թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրեսի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի Իթթիհատ
- ▶ ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գարեթ Դաւարան
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նահր, «Փոօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատեթ

ԼՕՒԻ ԸՆԴՀԱՆՍՈՒՄԻՆ ՇԱԲԱՏՈՒՄ ԱՌԻԹՈՎ

ՈՐՊԷՍՁԻ ՎԱՌ ՄՆԱՅ ԶԱՀԸ ԼՈՒՄԱԲՈՐ ԵՐԹՈՎ

Օրն է դարձել զիմելու ժողովուրդին, անոր մասնակցությունը, որպեսզի գոյատևել Լիբանանահայ Օգնությունը ինչպես: Առանց իր զաւակներուն օժանդակութեան, կնոպկան այս տարածուն եւ կենսական կազմակերպութիւնը չի կրնար կատարել իր առաքելութիւնը: Եթէ զլանանք մեր օգնութիւնը նոյնիսկ լուսնայական մասնակցութեամբ, այդ կը նշանակէ, թէ մենք դադրած ենք գոյութիւն ունենալէ, կորսնցուցած ենք մարդկային ամէնէն նուիրական զգացումը, մեր նմանները սիրելու եւ անոնց օգնելու արժանապատուութիւնը:

Կենսաբ, ճակատագիրը կամ բնութիւնը միեւնոյն բախտով չէ օժտած մարդը, չէ բախտաւորած մեզ նոյն շնորհներով: Այս իրողութիւնը արդէն թելադրանք մըն է նայելու մեր շուրջը, դիտելու կենսաբնական ստեղծած վերիվայրումները եւ «բայելու անկարող» հայրենակիցին օգնելու, որպէսզի ան կարենայ իր ճամբան շարունակել:

Ինչ է մեր բերելիք նպաստը Օգնութեան ինչի առաքելութեան շարունակման: Ան մեզմէ չի պահանջեր անկարելին, մեզի վնասելու առաջարկներ չի բերեր, այլ փոքր մասնակցութիւն մը, որ ինքնին օրհնուելով՝ մեր «կաթիլները» կը վերածէ ծով բարիքի: Այս կէտը պէտք է ըմբռնել իւրաքանչիւր հայրենակից: ոչ ոք զժգոհի, ոչ մէկ դուռ փակուի այս կամուրջ նուիրումը ստանձնած հայուհիներու խնդրանքին դիմաց: Օրերը որքան ալ աննպաստ ըլլան, մեր անձնական կարիքները որքան ալ անհրաժեշտութիւն ըլլան, ԼՕՈՒԻ տրամադրելիք մեր լուսնայ ոչինչ կը պակասեցնէ մեզմէ: սա կը նշանակէ «օրուան հացէն պատու մը» միայն, որ ոչինչով կը պակասեցնէ ունեցածը, այլ ընդհակառակը, պիտի ունենաս հոգեկան մեծ բաւարարութիւն, թէ «սալ գիտես դուն»...

75 տարիէ ի վեր ԼՕՈՒՐ շարունակած է իր ճամբան՝ յենած ժողովուրդին ՏԱՌԻՒՎ գիտակցութեան: Մանաւանդ երբ անդրադառնանք, թէ մենք տարագրուած ժողովուրդի զաւակներ ենք, մեր ցաւերը ամբողջ պետական ուժ կը ղարկենք, նոյնհետեւ կը զգանք մեր վրայ դրուած պարտաւորութեան անհրաժեշտութիւնը: Միւս կողմէ, ազգային ու ցեղային մեր առաքիւնութիւնը պիտի մղէ մեզ իրեօգնութեան, ուրիշ շին «ափ չբանալու» մեր ինքնուրույն վեհաձայնութեամբ: Մենք օրինակ կրճածած ենք ուրիշ ժողովուրդներու, մեր արժանապատուութիւնը բարձր պահելու մեր ներշնչած դասերով: Այսօր ոչինչ մեզ կրնայ հեռացնել մեր առաքիւնութեան գործընկերներէն: այս գործընկերը վրայ հիմնուած է Լիբանանահայ Օգնությունը ինչպէս եւ պիտի շարունակի իր երթը՝ ապահովելու մեր գիտակից զանգուածներուն յօժարակամ քաջաբերանքին:

Բոլորս ալ կը գիտակցինք, թէ ժամանակները չեն օգներ մեր տնտեսական յառաջնթացին, թէ մեր պայմանները նոյնը չեն, ինչ որ էին երէկ: Այսուհանդերձ ներքի չէ մեզի անտարբեր մնալ կամաւոր զոհողութիւն յանձն առած մեր քոյրերուն ջանքերը խափանել անձնական աննշան պատճառաբանութիւններով: Մեզմէ պահանջուածը ծերունի մը ուրախացնելու պիտի ծառայէ, չքաւոր աշակերտի մը խրախոյս ներշնչելն է, ու շուտով ընտանիքին առօրեայ մտահոգութիւնները մեղմելու պիտի ծառայէ միայն: ԼՕՈՒԻ իւրաքանչիւր անդամուհի կը հաւատայ, որ հայը այսօր եւս պիտի բանայ իր քաղաքը, պիտի բանայ իր դուռը եւ սիրով, ժպտուն, շնորհակալութեան քաղցր խօսքերով նեցուկ պիտի կանգնի այս նուիրական ձեռնարկին յաջողութեան: Ու պէտք է գիտնանք, թէ հայ ժողովուրդը այս մեծ կազմակերպութիւնը ստեղծած է իր ամէնէն անօգնական օրերուն... Այսօր մենք կրնանք մտարարել ԼՕՈՒՐ «Հանգանակութեան Օր»ունան՝ սեր լիբանոն մասնակցութեամբ, որպէսզի շարունակուի մեր գոյապայքարը, ու մասնաւորաբար Աւստրիայի այս ռեզիդան օրերուն մեր նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար խնդրող արգօթք մը ըլլայ, մոմ մը լուսաւորած ըլլալու հոգեկան անդրուածութեամբ:

ԼՕՈՒՐ պիտի քաջի դեռ երկար, բարձր բունած իր կապոյտ դրօշը, պայծառացնելու համար մեր մշուշապատ օրերը:

Ա.ԱՍԻԱ

ՌԱՏՐՈՆ

«ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ»

ՆՈՐ ՈՃԻ ԵՒ ՆՈՐ ՇՈՒՆՉԻ ԲԵՍԱՂՈՒԹԻՒՆ ՍԸ (Հ. ՏԵՐ ՍԵԼԵՆԵԱՆ) ԲԵՍԻՆ ԿՐԱՅ, 27 ՄԱՐՏ - 6 ԱՊՐԻԼ 2003



նական խորհուրդի անդամներ Մանուէլ Մարգարեան (Փայլակ), Յարութ Ծէքէրեան (Երկաթ) եւ Յովակիմ Քէչիշեան (Սուր): Լուրջ հարց մը քննարկելու կոչուած Դատաստանական խորհուրդի այս երեք անդամները արտայայտեցին թեթեւաբարոյ միտքեր՝ ստեղծելով գուրեմալի տրամադրութիւն, խորհուրդին կարեւոր նիստը վերածելով խնձոյքի սեղանի, գինարբուքի: Մանուէլ Մարգարեան իբրեւ վաստակաշատ դերասան անգամ մը եւս յայտնաբերեց իր տաղանդին նոր երեսները իր այս նոր տիպարով:

Հ.Բ.Լ.Մ - Հ.Ե.Լ. «Վահրամ Փափագեան» թատերախումբը կը շարունակէ իր երթը՝ տարեկան ներկայացումներով, հաւատարիմ իր սկզբունքին եւ մեծ վարպետ Վահրամ Փափագեանի յիշատակին, որուն ծննդեան 115ամեակն է:

«Վահրամ Փափագեան» թատերախումբը դարձելով Պէյրուէ հրաւիրած էր հայրենի վարպետ բեմադրիչ Երուանդ Ղազանճեանը՝ բեմադրելու Յակոբ Պարոնեանի «Պաղտասար աղբարը»: Թատերախումբին փրաջան անդամները արդէն ընտելացած են վարպետին բեմադրական ոճին ու աշխատելաձեւին եւ դժուարութիւն չունեցան «ճանչնալու» Ե. Ղազանճեանի պատկերացուցած «Պաղտասար աղբարը»:

Առաջին իսկ ակնարկով հանդիսատեսը անդրադարձաւ, որ դերասանները տէրն էին իրենց մարմնաւորած տիպարներուն, ինքնավստահութեամբ եւ կարելի հարազատութեամբ մեկնաբանելու շուրջ 130 տարուան կենթ ունեցող պոլսական ընկերային միջավայրի մէկ դրուագը: Մեզմէ աւելի քան դար մը առաջ ապրուած ընկերային խախտուած հոգեբանութեամբ՝ պարկեշտ մարդիկ ծաղր ու ծանակ եղած են, խաբէբայութեամբ եւ մասամբ նորին, մինչեւ յիմարանոց առաջնորդուելու անգուժ վերաբերումներով:

Այս մթնոլորտն էր, գոր լաւագոյնս վերապրեցուց «Վահրամ Փափագեան» թատերախումբը, որուն իւրաքանչիւր անդամը շնորհալի դերակատարութեամբ դրսեւորեց հոգեկան ու արուեստի շափանչները յարգող խաղարկութիւն: Խումբը ամբողջական ու միահիւս մթնոլորտ մը պարզեց՝ հանդիսատեսը հեռացնելով իր առօրեայէն ու զայն տեղադրելով պոլսական գարմանալի տրամադրութիւններով յորձանուտին մէջ: Ու պահ մը կարծեցինք, թէ այսօր եւս կը շարունակուի ընտանեկան թէ ընկերային միեւնոյն վիճակը՝ ըսել տալու համար մեզի, թէ ոչինչ փոխուած է կարծէք մարդկային գիտակցական թէ անգիտակցական աշխարհին մէջ, որքան ալ գիտութիւնը յառաջընթաց զիտութեամբ: Միեւնոյն քաղցրեղի տրամադրութիւնը՝ մակերեսային բարձր ու հետամուտ կենցաղով:

Գլխաւոր դերերը ստանձնած էին երեք շնորհալի դերասաններ, որոնք «Վահրամ Փափագեան» թատերախումբին եւ այլ թատերախումբերու մէջ արդէն ցուցաբերած էին իրենց սէրը՝ հանդէպ թատերական արուեստին եւ՝ ստանձնած կարեւոր դերեր:

Վարդան Մկրտիչեան (Պաղտասար աղբար), Սարին ինչիկեան (Անուշ), Յարութ Թորոսեան (Կիպար), մարմնաւորեցին խաբուած ամուսինի, քաղցրեղ եւ անհաւատարիմ կնոջ, նաեւ սիրականի դերերը: Այս վերջինք թէ՛ բարեկամը Պաղտասար աղբարին եւ թէ՛ անոր կնոջ սիրականը, երկուսի դերերով կարողացաւ ստեղծել պահանջուած կազմութիւնը: Այս եռեակին շուրջը դարձան Դատաստար

ՄԱՅՐԻՆԵՐՈՒ ԵՐԿՐԻՆ «ՂԱՐԻՊ»ՆԵՐԸ

Փողոցին մէջ, երկաթուղու մէջ, երկաթուղու վրայ, քաղաքի արտաքին, ճամբաներու երկայնքն ի վրայ մաքրութեամբ է զբաղուած: Աղբահանութիւնը ծառայութեան յատուկ փոքր Լիբանանի մէջ: Եթէ խօսենք նաեւ հնդկիկներու տեսակներու մասին, Լիբանանը կը տեսնուի այնպիսի ցայտուն լուսարձակի մը տակ, որուն ցոլացնող ճառագայթները ծիածանային երանգներով պիտի հիւսուէին:

Մեր թուած իւրաքանչիւր երկրացի արդէն գաղութ մը կ'ազդած է Լիբանանի մէջ: Ինչն է լքած են, իրենց ծննդավայրերը ու եկած սա կէս մը այրած, չփոթահար ժողովուրդով Լիբանան: Պատու մը ամէն օր Լիբանանի պատկերասփիւռը կը ցուցադրէ անգործներու, սնանկացողներու, աղքատութեամբ խեղճացած մարդից, ընտանիքներու, հաստատութիւններու վիճակներէն պատկերներ: Տնտեսութեամբ խախտուած Լիբանանը կը կերակրէ միլիոնաւոր իրենցները, մինչ իր գաղանկները բռնած են վաղթի ճամբան՝ կայուն ապագայ մը փնտռելու յոյսով: Բոլորին կարգաւորուած նոյնն է:

Տեղացին կը զաղթէ, օտարականը կը լեցնէ երկիրը, սեւ աշխատանքով օրապահիկ կը ճարէ: Անոր հազար ձեռք մըն է, կերածը՝ հաց ու պահարկ, քանի մը ձիթապարտեզ, «մենէիլ» մը (ձոթ-րինով հաց): Պառկած տեղը եթէ տեսնէք, որը մը իրարմէ վրայ թխուած օ՞ - 6 եւ աւելի երիտասարդներ, սենեակի մը ծաւալով անկիւնի մը մէջ:

Ամէն անգամ որ տեսնեմ այս «ղարիպ»ներէն մէկը, տրտում, գունատ, շուտով ու փութկոտ, միտքս կու գայ հայրենի խորհրդէն հեռու աշխարհներ մեկնած հայ «ղարիպ»ները, որոնց մասին ընդարձակ գրանակները մշակուած է արդէն: Հայրենի գաւառներէն զէպի Պոլիս գաղթը, տանուտըրը փոր մը հացի համար ի՛նչ զրկանքներու ենթարկուած է: Հայ կինը, հայ մայրը գուսպ համբերութեամբ երկար սպասած է իր ամուսնոյն, եղբոր, գաւառիկներ որբի չափիկ հազարձ կարծես կ'այրին կարօտէն...

Փողոցները եւ տունները մաքուր պահելու աշխատանքները: Տուններէն աղբի տոպրակները կրելու առանձնապէս պարտականութիւնը: «ղարիպ»ները: Ինչ ընենք, երրորդ աշխարհի երկրներու ցանկին կը պատկանեն: մեր շնորհները մէջ վերէն վար սահող ծխնելոյթի նմանող աղբատար դրուած չունինք: Քանի որ յետանց երկիրներու շարքին ենք, պէտք է որ ունենանք մեր ուրոյն ձեւը մաքրութեան, առողջապահութեան, մթնոլորտի պահպանման եւ այլն:

Տղան մէկիկ մէկիկ հաւաքեց դուռերուն դիտակները: Աստուած գիտէ միայն... Գիշաղէկ կը լուսնայ, որովհետեւ տնային գործերու սովոր է: Կը ցաւի մը անոնց, որ անուսեղ թողած եկած են մեր երկրի մեր քաղաքները, որովհետեւ մեր քաղաքներէն: Գիշաղէկ կը լուսնայ, որովհետեւ տնային գործերու սովոր է: Կը ցաւի մը անոնց, որ անուսեղ թողած եկած են մեր երկրի մեր քաղաքները, որովհետեւ մեր քաղաքներէն: Գիշաղէկ կը լուսնայ, որովհետեւ տնային գործերու սովոր է: Կը ցաւի մը անոնց, որ անուսեղ թողած եկած են մեր երկրի մեր քաղաքները, որովհետեւ մեր քաղաքներէն:

Սանդուխներուն շաքարեղէն մաքրութեան նուիրուածութիւնը: Մեր երկիրը կազմակերպուած է մինչեւ իսկ աղբահանութեամբ մարզին մէջ: «Սուրբ» սպասարկութեան շնորհիւ դատարարուած են

Իմաստը, եւ հազիւ անցած աւելածու ծառայութեամբ մը լեցուն աղբը ձեռքին տունէն դուրս կու գայ փողոցի ծայրին կանգ առած ինքնաշարժի մը անիւներուն մօտիկը գետեղելու: Քաղաքացիական կրթութեան պակասէն տառապող մարդեր են այսպիսիները, այն ըլլան թէ կին:

«Սուրբ» ծառայութեան աղբահանութիւնը կը ցուցադրէ անգործներու, սնանկացողներու, աղքատութեամբ խեղճացած մարդից, ընտանիքներու, հաստատութիւններու վիճակներէն պատկերներ: Տնտեսութեամբ խախտուած Լիբանանը կը կերակրէ միլիոնաւոր իրենցները, մինչ իր գաղանկները բռնած են վաղթի ճամբան՝ կայուն ապագայ մը փնտռելու յոյսով: Բոլորին կարգաւորուած նոյնն է:

Մեր վիշաղ ձգեմք մէկ կողմ, թէ եւ նոր «ղարիպ»ներ թեւաւորուած են ներկայիս զէպի Քաղաքի միւս կողմ, մինչեւ Լիբանանը կ'ապրէ: Աստուած գիտէ միայն...


Ս.Պ. Ծար՝ էջ 6

PHOTO NERSES (Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ) ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 36 photo ֆիլմի Գկարահանումը միայն 8,000 Լ. Ո. (Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ US95Է ՆԱԵԻ Լուսանկարի սոր ֆիլմ մը + ալպոմ մը + Գկարի INDEX մը Կը Գկարները փոքրերու լուսանկարներ ՉԱՍԿՈՒԱՆ յատուկ յարգարանով PHOTO NERSES: Պոլսի Համուտ, Զաղաքակաւտարանի փողոց «Սամբըր ԱՐԻՆ»-ի դիմաց: ԵՆ. 01 - 261858 եւ 01 - 255992 www.hamazkayin.com

Միջազգային Քաղաքական Կեսանք

ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՉԻ ՅԱԶՈՂԻՐ

«ԷՆ. ՊԻ. ՍԻ.»-ԷՆ ԳՈՐԾԷ ԱՐՁԱԿՈՒԱԾ ԹՂԹԱԿԻՑԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԹԻՒՆԸ



Հետեւ իրաքցիներուն կողմն ալ լսող ականջներու պէտք ունի:

Յստակ է, որ Մարտի վերջը Պաղտատէն դուրս եկած ըլլալու ամերիկեան ժամանակացոյցը չի յարգուիր: Յստակ է, որ բանալիներ կ'ընթանան Սիւրիայի նահանգներու մէջ այս հարցին գծով, յաւելեալ ուժեր կը դրկուին եւ ուշացումներ կան:

Ասիական ըսել չէ, որ գործը ձախող կ'ընթանայ: Իւրաքանչիւր մահ կորուստ մըն է, սակայն կորուստները սահմանափակ թիւերով են ցարդ:

Ամէն օր եւ ամէն գիշեր կը լսեմ Պաղտատէ մըճահարող «Պի - 52»ներուն ձայները:

Աֆղանիստանի եւ Վիետնամի օրինակով, Սիւրիայի նահանգներ գինուորական Տակայական ուժ կը կուտակեն՝ հաւատարմով, որ այդպիսով ծուկի պիտի բերեն իրաքցիները: Նախապէս տեսած եմ ասոր յաջողութիւնը: Ամերիկեան լաւատեսութիւնը արդարացած է:

Միւս կողմէ, սակայն, ինչ գին կը վճարեն քաղաքայինները:

Օրին, Վիետնամի մէջ եւ մտայ ամերիկեան հակա-կառնի տակ ինկած գիւղ մը, որ բոլորովին կործանած էր: Նախապէս գիւղը եղած էր Վիետնամի իշխանութեան տակ, որուն անդամները կը սպառնային շրջանի ամերիկացի հրամանատարին կեղրոնատողի զինուորականները: Հետեւ արար հրամանատարը հրահանգած էր ումարիները, որուն գոհ պահած էին իր գիւղերուն ներքինը շատերը:

Մեզի հետ եղող հազարապետը հարցուց, թէ «ինչպէս կրնար այդպիսի բան պատահիլ» եւ զինուոր մը պատասխանեց, թէ՛ «մենք ստիպուած էինք կործանել այդ գիւղը՝ գայն ազատելու համար»:

Պուշ - Պլէր վարչակարգը չ'ուզեր յոյն այդ պիտակը փակցուելի այս պատերազմին. այս մէկը ազատագրում է իրենց համար: Սակայն, հարցը այն է, որ ստուգման կէտերու վրայ կանգնած ամերիկացի ծովայինները կասկածանքով կը քննեն բոլոր անխտիր, կին թէ երեխայ, անձնասպանական ուժերը ու պատճառով:

Առաւել, հարաւի մէջ ոչ մէկ ժողովրդային ըմբոստութիւն տեղի կ'ունենայ: Մինչ Պաղտատի ճակատամարտը կը զարգանայ, քաղաքային գոհեր տարու հաւանակները կը արժանանան:

Մինչ այս պատերազմը կը շարունակուի, այս ուրախանն է, որ կը պաշարէ բոլորս: Ամերիկացիներն ու բրիտանացիները պէտք է հասկնան այս մէկը:

Զեմ կարծեր, որ այժմէն կրնանք գիտնալ, թէ ինչպէս վերջ պիտի գտնէ պատերազմը. կան շատ մը վարկածներ: Պաղտատի շրջափակում... Սատտամի դէմ յատուկ գործողութիւններու շղթայագրածում: Փենթագոնի լաւատեսները կը խօսին ներքին յեղաշրջումի մը մասին:

Ո՞վ կրնար հաւատալ, թէ Ում Բասրը պիտի դիմադրէր վեց օր կամ ամերիկացիք պիտի սպաննուէին անձնասպանական ումարահարումի պատճառով: Ասիկա կը նմանի Այարոյրդանանի եւ Կազայի դէպքերուն, եւ կարգ մը վայրեր իսկապէս կը նմանին այդ շրջաններուն:

Միացեալ Նահանգներն ու Բրիտանիա պէտք է խուսափին այդ վարկածին իրականացումէն... Օտար ուժեր կու գան, ժողովուրդը կը դիմադրէ, ապա անձնասպանական ումարահարումներ եւ հրոսակային կռիւներ տեղի կ'ունենան:

Միակ տարբերութեամբ, որ իրաքցիները աւելի ուժգին պատերազմ պիտի մղեն, քան պաղեստինցիները, որովհետեւ աւելի լաւ զինուած են:

Մենք, մեծ թիւով ամերիկացիներու կողքին, գի-

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»՝ ՅԵՏ-ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԻՐԱՔԻ ՀԱՐՅՈՎ

Մինչ իրաքի դէմ պատերազմը կը շարունակուի, այլ ճակատամարտ մը կը մղուի, այս պարագային ճշգրիտը համար իրաքի յետ պատերազմեան ճակատագիրը:

Այս պատերազմը եւս կը մղուի մէկէ աւելի ճակատներու վրայ:

Միացեալ Նահանգներ եւ իր եւրոպացի դաշնակիցները համաձայն չեն յետ պատերազմեան իրաքի մէջ ՄԱԿի ունենալիք դերակատարութեան անհրաժեշտ հարցերուն շուրջ:

Նոյնինքն Պուշի վարչակարգին մէջ, Փենթագոնը եւ արտաքին գործերի նախարարութիւնը վէճի մէջ են, թէ իրենց մէջ ով պիտի տայ կարեւոր որոշումները:

Եւ իրաքեան ընդդիմադիր խմբակներուն կը շարունակեն մրցիլ իշխանութեան հասնելու համար:

Այս բանավեճերը ունին անիրական, թերեւս գերիրապաշտ բնոյթ:

Եթէ լսէք Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ժէք Սթրոն, պիտի մտածէք, թէ նոր իրաքը պիտի ղեկավարուի իրաքցիներու կողմէ: Սակայն եթէ կարողաք մամուլ տեղեկագիրները կամ հարցնէք Ուաշինգթոնի մօտիկ եղող իրաքցիներու կարծիքը, պիտի հաւատաք, թէ ամերիկացի մը, չորս իրաքցի խորհրդակցանքներու օժանդակութեամբ, պիտի վարէ իրաքի 23 նախարարութիւնները:

Մինչ իրաքի մէջ պատերազմը կը շարունակուի, ծովափնեայ վիլլայի

մը մէջ ձէյ կարները անունով հանգստեան նախնական վիճակի մէջ ըլլան այս օրերուն, արդէն ահագանգային մթնոլորտ ստեղծած են Ընդդիմադիր ակաւաւոր դէմք մը «Պի-Պի-Սի»-ի յայտնեց, թէ իրաքի նախարարութիւնները ամերիկացիի մը կողմէ ղեկավարուելու Զօրավար կարները եւ իր անձնակազմը նաեւ իրաքի մէջ ժողովրդավար կառավարութեան մը ենթահողը կը պատրաստեն: Կ'ակնկալուի, որ աշխատանքները աւարտին երբեք ամսուան ընթացքին, որպէսզի իշխանութիւնը արագ կերպով փոխարարութեան իրաքեան վարչակարգի մը:

Սակայն միայն փոքրամասն մասնագէտներ այս ժամկէտը իրապաշտ կը գտնեն:

Յետ պատերազմեան իրաքի մէջ ղեկավարը զիւրաքանչիւր պէտք է ըլլայ, թէ ոչ նոյնպէս վիճելի նիւթ դարձած է: Փենթագոնի կ'ուզէ յետ պատերազմեան հարցերը հունակորելու մէջ նոյնքան խօսք ունենալ, որքան պատերազմի ընթացքին: Փենթագոնը եւ արտաքին գործոց նախարարութիւնը համաձայն չեն, թէ իրաքեան ընդդիմութեան ո՞ր դէմքերը բանալի դերակատարութիւն պիտի ունենան յետ պատերազմեան անցուցանելու կառավարութեան մէջ:

Փենթագոն ԱՏՄէտ Ծալապիի կողքին է, մինչ արտաքին գործոց նախարարութիւնը կը կարծէ, թէ Ծալապի վստահելի չէ:

Ամերիկացիներու ծրագրները, որքան ալ նախնական վիճակի մէջ ըլլան այս օրերուն, արդէն ահագանգային մթնոլորտ ստեղծած են Ընդդիմադիր ակաւաւոր դէմք մը «Պի-Պի-Սի»-ի յայտնեց, թէ իրաքի նախարարութիւնները ամերիկացիի մը կողմէ ղեկավարուելու Զօրավար կարները եւ իր անձնակազմը նաեւ իրաքի մէջ ժողովրդավար կառավարութեան մը ենթահողը կը պատրաստեն: Կ'ակնկալուի, որ աշխատանքները աւարտին երբեք ամսուան ընթացքին, որպէսզի իշխանութիւնը արագ կերպով փոխարարութեան իրաքեան վարչակարգի մը:

Եւրոպական Միութիւնը նոյնպէս դժգոհ է: Ան կ'ուզէ, որ յետ պատերազմեան իրաքի հարցերը վարէ ՄԱԿը, եւ ոչ երկիրը ներխուժող երկու պետութիւնները: «ՄԱԿի դերակատարութիւնը կենսական է», ըսու Յունաստանի վարչապետ Բոսիան Սիմիթիս: Յունաստան Եւրոպական Միութիւնը նախագահող երկիրն է: «Յետ պատերազմեան իրաքի մէջ ՄԱԿի կարելու դերակատարութիւնը տարվոյ միայն, որ կարելի է առաջը առնել իրաքեան ազգայնական պայթումի մը»:

Սակայն ամերիկացի պաշտօնատարի մը համաձայն, Գոլիի Փառլը համաձայն է ՄԱԿի դերակատարութեան, բայց ՄԱԿի իշխանութեան:

Այս բոլորը կը նշանակեն, թէ երբ հարցը վերաբերի յետպատերազմեան իրաքի, այս պահուստը շատ աւելի հարցումներ կան քան պատասխաններ:

«ՊԻ. ՊԻ. ՍԻ.»

ՄԱՅՐԻՆԵՐՈՒ ԵՐԿՐԻՆ...

Ծարուճակուած՝ 5րդ էջԸԸ

նակին անոնցմէ կարելի է տեսնել կամուրջներու կամ մայթերու եզրին քնացողներ, խշտակի մը վրայ: Չի բաւեր գթալ, խղճալ, ցաւի կամ նոյնիսկ պօքալ անոնց կենցաղին ու տեսքին, բայց նոյն ատեն կը մտածեն ակամար. ուրեմն մեր երկիրը տնտեսական տագնապ չունի, որ կարելիու թիւնը ունի կերակրելու, պահելու միլիոններով դրսեցիներ, որոնք թէեւ փոքր գումարներով կը գոհանան, բայց այդ փոքր գումարները երկրի կ'արժեն միլիոններու տոլարի հաշիւ, որ դուրս կ'իլլէ մեր երկրէն:

Կը մտածենք արդարեւ. ուրեմն մեր երկիրն մէջ ընդի ազգային, ծառայ, սանդուխներ լուացող, աղբահաւաք կամ մինչեւ իսկ երեխաներու հոգատար աշխատող ձեռքեր չունինք: Մեր երիտասարդները բարձրորակ պաշտօններու համար ծնած են: Յետեւեւեան սերունդը չկայ այսօր, որ վկայեն, թէ իրենք չիլումբերներ քալելով Քարանթինայէն մինչեւ «Օթէյ Տիէ» կամ մայրաքաղաքի բարեկեցիկ տունները կ'երթային լուացք լուալու, տուն մաքրելու, խոհարար կամ մանկատան ըլլալու: Բարեբախտաբար չու-

նիք այս մակարդակի դասակարգ մը, բայց չբաւարարութիւնը բոյն դրած է երկրին մեծ մասի ընտանիքներուն մէջ: Այդ չբաւարարութիւնը փաստելու միջոցները չունին, որովհետեւ չեն յօստարի կատարել արժանապատուութիւն վիրակիրը տնտեսական տագնապ չունի, որ կարելիու թիւնը ունի կերակրելու, պահելու միլիոններով դրսեցիներ «անօթի մեղաքան» ծառայելու ունենալով ընտանիքներու կամ այլապէս:

Ամերիկացի գաղթողները կ'ըսեն, թէ գործերու մէջ խտրի չկայ: Կարելու թիւնը «տալը չինել» է: Մեր մօտ այդ հոգեբանութիւնը մերժուած է: Ուրեմն պէտք է գաղթել, դառնալ «ղարիպ», կորսուել անծայրածիր հորիզոններու տակ, կատարել ամէնէն նուաստ աշխատանքները, բայց՝ հեռու թիւնը, անաստութիւն մըն ալ կայ, ինչ որ ընդունելի է եւ հարցերը լուծէ, քան թէ՛ բարեբախտական հիմնարկները Վերջապէս, ժողովուրդին բաւարար «եռալ երթալու» իմաստութիւնը մըն ալ կայ, ինչ որ ընդունելի է եւ հարցերը լուծէ, քան թէ՛ բարեբախտական հիմնարկները թիւնը:

Այս հոգեբանութիւնը վնասեց մեր երկրին տնտեսութեան: Մեր յորածը ուրիշներ ըրին, օգտուեցան: Ըսել չենք ուզեր, թէ մեր երիտասարդները ըլլալին «սեւ աշխատանքներ» կատարողները, բայց չկարողա-

ցանք նոյնիսկ հաշտուել միջին չափանիշներու հետ՝ ձգտելով անպայման մեր փնտառածին, մեծ փառքաքին: Օրինակի համար, մեր ընտանիքներուն մէջ «տուն մաքրող տիկիններ» մատի վրայ կը համը ին: Բարեկեցիկ ընտանիքներու մէջ սեւ համարներ մէկէ աւել կը համը թուի օտարը հինը, մանկանամ կածերախնամ ծառայողներ Վերջապէս, ժողովուրդին բաւարար «եռալ երթալու» իմաստութիւնը մըն ալ կայ, ինչ որ ընդունելի է եւ հարցերը լուծէ, քան թէ՛ բարեբախտական հիմնարկները թիւնը:

«Աշխատանքը ամօքն է», կ'ըսէ դարձեալ ժողովրդական իմաստութիւնը, անաշխատանք մնալը դատապարտելի է որուն ակնարկած է նաեւ Գրիգոր Նարեկացի յանցանքներու շարքէն համարելով «անաշխատանք»-ին ծուլութիւնը:

Որքան հարուստ եղած մեր փոքր Հիբանսը, եւ որքան զժախտ...

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՒԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետևումները կատարելու թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

www.aztagdaily.com

L'ASSOCIATION DES ETUDIANTS ARMENIENS DE L'USJ

Vous invite a une conference intitulee
"LES PRINCIPES DE L'AUTO - DETERMINATION DES PEUPLES ET DE L'INTEGRITE TERRITORIALE DES PAYS A L'EPREUVE DES FAITS"

avec
Le Professeur GEORGES KHADIGE
 et
M. Le Professeur VATCHEH NURBATELIAN

LE MERCREDI, 9 AVRIL 2003 A 19H,
 AMPHITHEATRE A,
 CAMPUS DES SCIENCES SOCIALES, RUE HUVELIN.

INVITATION

Ա. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ

ԱՐՓ. Տ. ՄԵՍՐՈՊ ԲՅՆՅ. ԲԵՐԲԷՂԵԱՆ

Նիւթ՝ «ՀԱՅԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ»

Չորեքշաբթի, 9 Ապրիլ 2003, առաւօտեան ժամը 9:30ին:

ԹԱՂԱԿԱՆ ՆՈՐՇՈՐԻՂ Ա. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՓԻԹԸՐ ԱՌՆԷԹ
Ծար.ը՝ էջ 8

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Իրաքի ղեկավար Միսթաֆա Նահանգներու եւ Բրիտանիոյ շրջապատում պատերազմը կը շարունակուի նոյն սաստկութեամբ: զիւրեք ու քաղաքներ օդային ու ցամաքային անխնայ ուժերով զինուորական կ'ենթարկուին, թաղամասեր ու բնակարաններ կը քանդուին, եւ անմեղ քաղաքացիներ կը զոհուին: Իրաքեան բանակը, ցեղախուժներն ու ժողովուրդը բուն զինուորական թիւերն ունենալով տան ներխուժողներուն, որոնք անտեսելով ամենաբարձր բարձրագոյն բողոքի ձայները եւ ոտնակոխելով մարդկային տարրական ամէն իրաւունք՝ կը շարունակեն իրենց յառաջխաղացքը, հասնելով Պաղատի գոտիներուն: Պատերազմի այս օրերուն հետաքրքրական եւ այժմէական է ծանօթանալ իրաքի պատմութեան հոլովոյթին:

ՄԻՋԱԳԵՏԻՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՕՐԲԱՆ. ՍՈՒՄԵՐ ԵՒ ԱՔԲԱՍ

Իրաք կամ Միջագետք աշխարհի ամէնէն



Ասորեստանի թագաւորը ձիակառքով տեղափոխութեան ընթացքին

Հին քաղաքակրթութեան օրրաններէն է եւ անոր պատմութեան արմատները կ'երկարին մօտաւորապէս եօթը հազար տարի առաջ: Արդարեւ, Ն. Ք. հինգ հազարամեակ առաջ լեռնաբնակ ցեղ մը՝ սումերները (կամ շումեր), որոնք որսորդներ էին, դաշտերը իջնելով հակալիւս հաստատեցին Եփրատի եւ Տիգրիսի գետային ուղիներուն վրայ, ջրանցքներ կառուցեցին եւ ոռոգովի երկրագործութիւնը զարգացուցին՝ մշակելով ցորեն, գարի, բանջարեղէններ եւ արմաւ: Անոնք հետզհետէ արեւի տակ չորացած ցեղով բնակարաններ եւ իրարմէ անջատ բնակավայրեր կառուցեցին. այսպէսով այնուհետեւ ժողովուրդներ, հաւաքականութիւններ իրենց բնակավայրին անոնով ճանջուցեցան, ինչպէս հետագային բարեկեցիք՝ Բաբելոնի անունով, ասորեստանցիք՝ Աշուրի անունով եւ այլն: Սումերներ գտան նաեւ բուրդ մանելու եւ կերպաս հիւսելու կերպը:

Այսպէսով սումերական քաղաքակրթու-



Ասորեստանի Սաղմանասար Գ. թագաւորին արշաւանքը դէպի Ասորիք

թիւնը ծաղկեցաւ հարաւային Միջագետքի մէջ, ուր կազմաւորուեցան քաղաք-պետութիւններ՝ Ուր, Ուրուկ, Քիւշ, Լակաշ, Լարսա, Նիփուր եւ այլն: Սումերներ ստեղծեցին պատկերազիրը եւ հետագային՝ սեպագիրը, որ տարածուեցաւ տարբեր երկրներ, նաեւ՝ Ուրարտու: Անոնք հարուստ բանահիւսութիւն, գրականութիւն ու մշակոյթ մշակեցին, հիմնեցին դիցարաններ, կազմեցին աստուածութիւններ, հաստատեցին բնութեան ուժերու՝ երկինքի, երկրի ու ջրերի պաշտամունքը, զարգացուցին գիտութիւնները, յատկապէս՝ թուարարութիւնը, աստղագիտութիւնը, բժշկութիւնը, ճարտարագիտութիւնը, կերպարուեստը եւ քաղաքաշինութիւնը: Սումերական քաղաքակրթութիւնը Ն. Ք.

2400ական տարիներուն նուաճուեցաւ եւ ձուլուեցաւ Աքքատական պետութեան մէջ. արքայները սեմական լեզու կը խօսէին եւ հաւանաբար ցեղակից էին սումերներուն. անոնք կը նկատուին ներկայ արաբներուն եւ հրեաներուն նախահայրերը: Այսպէսով կազմաւորուեցաւ սեմական ժողովուրդներուն ժողովուրդը: Աքքատ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով մարդու եւ մնայուն զօրք ստեղծեց եւ նուաճեց ամբողջ Միջագետքը: Կառուցուեցան ոռոգող ջրանցքներ եւ չափի ու կշիռի կարգ հաստատուեցաւ:

Աքքատական պետութեան Ն. Ք. 2300ական տարիներուն յաղորդեց Ուրի երրորդ հարստութիւնը:

ԱՍՈՐԵՍՏԱՆ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ

Այս նոյն ժամանակ հիւսիսային Միջագետքի մէջ զօրացան ասորեստանցիները, որոնք այդ անունով կոչուեցան իրենց գլխաւոր Աշուր քաղաքին անունով: Ասորեստանցիք, սեմական ցեղ մը, Ն. Ք. հինգ հազար տարի առաջ տիրապետութիւն հաստատած էին Տիգրիսի վերին հովիտի բարձունքներուն եւ Արպեի (ներկայ Արաբի) ու Նինուէի բարեբեր դաշտերուն վրայ (որոնք մինչեւ հիւսիս հասնող շտեմարան կը նկատուին): Անոնց կրօնը աշուրականութիւնն էր՝ Աշուր Աստուծոյ անունով. Աշուր աթուր (հող) բառէն սերած է եւ հողատէր կը նշանակէ: Սուր Գիրքին համաձայն, Աշուր Սեմի գաւազն էր: Ն. Ք. 1813ին Շամսի Ատատ Ա. Ասորեստանի թագաւորութիւնը հիմնեց՝ միացնելով Աշուր, Նինուէ եւ Արպեի քաղաքները:

Սեմական ծագումով ամովրացիներ Ն. Ք. 6-5-րդ դարուն Ամուրուի (ներկայ Սուրիա) տափաստաններէն ներխուժեցին Միջագետք եւ գերակշռութիւն հաստատեցին շորհի կասպից ծովու հիւսիսային արօտավայրերէն իրենց բերած եւ միջագետքիներուն անձնօթ ձիերուն, զորս «լեռներու աւանակ» կը կոչէին, եւ որոնց երկանի կառքեր լծելով կը գործածէին պատերազմի ժամանակ: Ամովրացիք ամբողջով կառուցեցին թէ՛ ինքնապաշտպանութեան եւ թէ՛ հետագայ նուաճումներու համար յենակէտեր ունենալու նկատառումներով: Անոնք 1894ին կառուցեցին Բաբելոնը, որմէ ետք ծանօթ դարձան բարեկեցի անունով: Այսպէսով հիմնուեցաւ Հին Բաբելոնեան կայսրութիւնը, որ ծանօթ դարձաւ նաեւ իբրեւ Ամովրական հարստութիւն:

Բաբելացիք ուշիմ ժողովուրդ էին. անոնք սկիզբ դրին դրամի գործածութեան, տասներկուքի բազմապատկութեան դրութիւնը հաստատեցին, որուն հիմամբ օրը 24 ժամի եւ վայրկեանը 60 երկվայրկեանի բաժնուած է: Եօթը բախտաբեր կը նկատուէր, որովհետեւ եօթը մոլորակներ կը պաշտէին: Այսպէսով շարժելով եօթը օրերու բաժնուեցաւ, որ յետոյ հրեաները ընդօրինակեցին:

Հին Բաբելոնեան կայսրութեան ամէնէն հուշակաւոր գահակալը դարձաւ Համուրապի (Ն. Ք. 1792-1750), որ պատմութեան մէջ առաջին պետական օրէնսդրութիւնը հաստատեց:

Բաբելացիք ոխերիմ թշնամիներ ունէին. անոնցմէ հիթիթները Հայկական բարձրաւանդակէն յառաջանալով ներխուժեցին Միջագետք երկաթէ գէնքերով զինուած հիթիթներու բանակը գերակշռութիւն ունենալով բաբելական պղինձէ գէնքերով բանակին վրայ՝ 1595ին գրաւեց Բաբելոնը: Նոյն ժամանակ հուրրիներ (խուրրի), միտանիներ եւ կասեաններ ներխուժեցին Միջագետք. անոնցմէ հուրրիներ եւ միտանիներ թագաւորութիւններ հիմնեցին ԺՁ - ԺԳ դարերուն:

Ասորեստան կրկին զօրացաւ ԺԵ դարուն եւ 1365ին հիմնուեցաւ Հին Ասորեստանեան կայսրութիւնը, որ գոյատեւեց մինչեւ 1248:

Բաբելոնեան երկրորդ հարստութիւնը հաստատուեցաւ Ն. Ք. ԺԲ դարուն. անոր ամէ-

ԻՐԱՔ՝ ՊԱՏԱՌԻԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ԸՆԴՄԵՉԸՆ

նէն հուշակաւոր գահակալը դարձաւ Նաբուգոդոնոսոր Ա. (1119-1098), որուն օրով Բաբելոն հզօր կայսրութիւն դարձաւ: Բաբելոն, աշխարհի ամէնէն հոյակերտ մայրաքաղաքը, փոռած՝ Եփրատի ափերուն (ներկայ Հալլա քաղաքին մօտ), ճարտարապետական իւրայատուկ կառոյցով, ուղիղ փողոցներով եւ երեք-չորս յարկանի բնակարաններով, կրկնակի պարիսպներով, բազմաթիւ աշտարակներով եւ վիթխարի դարպասներով պաշտպանուած էր: Գետափնեայ գեղատեսիլ ճանապարհները շարժական հսկայ կամուրջով ու յաստանաւորով կապուած էին: Միջնաբերդը կամ արքունի քաղաքը բացառիկ շէնքերով ունէր: Ամբողջ մայրաքաղաքը յիսուն մեթր բարձրութեամբ արուեստական բուրգերով շրջապատուած էր, որոնց վրայ հանգող կամարներուն վրայ կախովի այգիներ կային, որոնց մէջ՝ զովաշունչ սենեակներ եւ ջրաբաշխական սարքեր: Իսկ թագաւորական պալատին կից գտնուող կախովի այգիները աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը կը նկատուէին:

ԱՍՈՐԵՍՏԱՆ ՀՉՈՐ ԿԱՅՍՐՈՒԹԻՆ

Բաբելոն եւ Ասորեստան դարձան Միջագետքի հզօր կայսրութիւնները, մինչեւ որ Ն. Ք. 746-745ին Ասորեստան նուաճեց Բաբելոնը եւ ամբողջ Միջագետքն ու Միջին Արեւելքը՝ Ասորիքը, իրանեան բարձրաւանդակին արեւմտեան երկրամասերը, Պաղեստինը, Եփրատը, Կիլիկիան, Փոքր Ասիոյ կեդրոնական դօտին, մեծ արշաւանքներ կազմակերպեց Նայիրիի ու Ուրարտուի դէմ եւ որոշ ժամանակ գերակշռութիւն հաստատեց Հայկական բարձրաւանդակին մէջ կարեւոր մասին վրայ:

Ասորեստանցիք ճանջուած էին իբրեւ անգուլ ժողովուրդ. անոնք զինուորական կազմակերպուած կառոյցներ ստեղծեցին, ձիաւազներու գործածութեան դրութիւն հաստատեցին բանակին մէջ, պատերազմական նաւեր պատրաստեցին եւ հետախույսական յրտեսական ցանցեր կազմակերպեցին: Այսպէսով անոնք իրարու ետեւէ կը գրաւէին քաղաքներ ու երկիրներ. նուաճուած թագաւորները կը կուրացուէին կամ բողոքով մէջ կը նետուէին. տղամարդիկ, կիներ, մանուկներ ու ծերեր զանգուածաբար կը բնաջնջուէին կամ կը գերեզմանուէին ու կը գործածուէին իբրեւ ստրուկ:

Ասորեստան մեծ դեր ունեցաւ Առաջաւոր Ասիոյ տնտեսական կեանքին վրայ: Ստրկատիրական այս պետութեան հիմնական եկամուտը կողոպտչական արշաւանքներն էին.

նուաճուած ժողովուրդները իբրեւ ստրուկներ կաշխատէին իրենց տէրերուն համար, իսկ ասորեստանցիները իբրեւ զինուոր կը ծառայէին բանակին մէջ:

Մայրաքաղաքը՝ Նինուէ, ժամանակի ամէնէն մեծ քաղաքը եւ Ասորեստանի փառքին խորհրդանիշը դարձաւ. հոյակերտ այս քաղաքը, տարածուած՝ Տիգրիսի արեւելեան ափին, երկրագործական հարուստ դաշտերու մէջ, ընդարձակ պուրակներով, գեղատեսիլ ծառազարդ պողոտաներով (գլխաւոր պողոտան 26 մեթր լայնք ունէր) եւ աստուածներու նուիրուած տաճարներով հրաշալիք մըն էր:

Թագաւորական պալատը, որ կը կոչուէր «պալատ առանց մրցակիցի», ամենի բարձրութեամբ եւ գեղեցիկ, գունազեղ սալաքարերով զարդարուած պատերով, հսկայ արձաններով, քանդակներով եւ ութսուն մեծ սենեակներով հոյակերտ եւ ամբարձու կառոյց մըն էր: Տասնութը ջրանցքներ բարձրունքներէն ջուր կը մատակարարէին քաղաքին: Հուշակաւոր էր մատենադարանը, ուր մօտաւորապէս երեսուն հազար սեպագիր կաւէ սալիկներ պահպանուած էին: Ամբողջ մայրաքաղաքը պարսկապետներով, աշտարակներով եւ տասնհինգ վիթխարի դարպասներով պաշտպանուած էր:



Բաբելոնի զիկուրաթը (բրգաձու աստիճանաւոր տաճար. Միջագետքի գլխաւոր քաղաքներէն իւրաքանչիւրը իր զիկուրաթը ունէր. զիկուրաթի տաճարը քաղաքի գլխաւոր Աստուծոյ բնակատեղին էր)

Նուաճուած ժողովուրդները բոլորն ալ թշնամի էին ասորեստանցիներուն եւ ծանր լուծի տակ կը հեծէին: Երկարատեւ եւ մնայուն պատերազմները սպառած էին Ասորեստանի զինուորական կարողականութիւնը, եւ հարկադրաբար վարձկաններ ներմուծուած էին բանակին մէջ: Իսկ կայսրութեան սահմանները բնական ամրութիւններ չունէին՝ ոչ լեռներ եւ ոչ ալ անապատներ:

Մարեր, սկիւթացիք, քաղդէացիք, եգիպտացիք եւ հայեր դաշնակցած քալեցին Նինուէի վրայ: Աշուր ինկաւ 614ին: Նինուէ պաշարուեցաւ 612ին եւ երեք ամսուան կռիւներէ ետք երբ զօրաւոր հեղեղներու ու ողողմաներու պատճառով մայրաքաղաքին պարիսպները փուլ եկան, անոնք թշնամիները խուժեցին ներս եւ գրաւեցին, հրդեհեցին ու հիմնայնապէս կործանեցին գայն. վերջին թագաւորը Սինառիշխուն իր պալատի բոցերուն մէջ նետեց ինքզինք: Ասորեստանեան ուժերու մնա-



Այծի քանդակ Ուրի թագաւորական դամբարանին մէջ

ցորդները վերջնականապէս ջախջախուեցան 605ին, Կարկեմիշի մէջ, որմէ ետք Ասորեստան չբացաւ պատմութեան թատերաբեմէն: Նինուէի շուրջ, Տիգրիսի ափերուն դարբուրու ընթացքին հաստատուած ոռոգումի դրութիւնը հիմնովին աւերուեցաւ եւ շրջանը վերադարձաւ քարէ դարու մակարդակին:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ աւետարական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենակը:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ
ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ԲՄԲԱԿՈՑԷ ԿԱԶԱՆ

Առնուապն եօթը պաղեստինցիներ սպանուեցան եւ ավելի քան քսան ուրիշներ վիրավորուեցան, երբ երէկ գիշեր խարախէլան «ԷՖ. 16»-եր եւ «Ափաշի» ուղղաթիռներ ոմբակոծեցին Կապան, այն պահուն, երբ այսպէս ըսած «լաւատես» յայտարարութիւններ կը կատարուէին խաղաղութեան գործընթացին նկատմամբ, միջապալին ընտանիքին կողմէ...

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԳՈՏ ՄԱՀՄՈՒՏ ԱՊՊԱՍԷՆ
ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԵՒ ԼՈՆՏՈՆ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա յանձնառու կը մնան Միջին Արեւելքի խաղաղութեան համար միջազգային ուղեգիծի մը գործադրութեան, յայտնած է Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ երէկ Պեյֆասթի մէջ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրի հետ մամուլ ասուլիսի մը ընթացքին:

Ան յայտնած է, թէ Միջին Արեւելքի մէջ խաղաղութիւնը պիտի պահանջէ, որ «պատմութեան եւ կրօնքի խոր տարակարծութիւններ յաղթահարուին»:



Ֆիշըր եւ Բացալ

Ան դիտել տուած է, թէ սակաւ կարելի է եւ կը պատահի արդէն Հիւսիսային Իրլանտայի մէջ, ուր 5 տարի առաջ կնքուած խաղաղութեան համաձայնագիրները համայնքային ընդմիջ տարիներու հակամարտութիւններ հանդարտեցուցած են:

Միջին Արեւելքի դիւանագիտական քառակուսի՝ Մ. Միւրթիւն, Ռուսիա, ՄԱԿ եւ Մ. Նահանգներ, յայտնած են, թէ պիտի հրապարակեն ուղեգիծ մը՝ 2005ին յանգելու համար պաղեստինեան պետութեան մը ստեղծումին, Մահմուտ Ապպասի գլխաւորութեամբ պաղեստինեան նոր կառավարութեան մը հաստատումէն ետք:

Պուշ յայտնած է, թէ «գոհ է» Մահմուտ Ապպասէն:

Պլեյր, իր կարգին, յայտնած է, թէ անոնք, որոնք կ'ըսեն, թէ Միջին Արեւելքի գործընթացը անյոյս է, պէտք է Հիւսիսային Իրլանտայի նախին:

ՖԻՇԸՐ ԿԸ ԳՈՎԱԲԱՆԷ ՈՒՂԵԳԻԾԸ

Մինչ այդ, Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռլօֆ Ֆիշըր երէկ Իսրայէլի նախագահ Մոնչէ Քացաւի հետ տեսակցութեան մը ետք, գովաբանած է ուղեգիծը:

Ֆիշըր եւ Քացաւ նաեւ շեշտած են անհրաժեշտութիւնը՝ Մահմուտ Ապպասի գործակից կանգնելու, մինչ այս վերջինը կը պայքարի նոր կառավարութեան մը կազմութեան համար:

Ուղեգիծը սքանչելի առաջարկ մըն է: Պաղեստինեան շրջաններուն մէջ պէտք է զօրավիգ կանգնել քաղաքացիական «անարեւելի» կազմակերպութիւնները, ըսած է Ֆիշըր:

Վարչապետ Արիէլ Շարոնի գրասենեակին պատասխանատու Տոզ վախկնալս երէկ պէտք է Ուաշինգթոն ուղղուէր, ամերիկացի պաշտօնատարներու ներկայացնելու համար Ուղեգիծին առնուազն 15 դրբեփոխումներ, առանց որոնց Իսրայէլ պիտի մերժէ ծրագիրը:

Սակայն անոր այցելութիւնը յետաձգուած է, ըստ Իսրայէլացի պաշտօնատարի մը, ամերիկեան կողմի ժամանակացոյցի կապուած հարցերով:

Շարոն Երկուշաբթի օր վերահաստատած է, թէ «սկզբունքով» կ'ընդունի ծրագիրը, սակայն վախկնալս անցեալ շաբթ յայտնած էր, թէ ուղեգիծին մէջ առնուազն

15 բարեփոխումներ կը պահանջէ:

Կէտերուն մեծամասնութեան առանցքը պաղեստինեան ապահովութեան ուժերուն կողմէ խրախուսող արժատական խմբակներ ճզմելու անհրաժեշտութիւնն է:

ԱՊՊԱՍ ՈՒՂԵԳԻԾԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾԱՂՈՒԹԵԱՔ ԶԷ ՀԵՏԱԶԵՐՈՒԱԾ, ԸՍՏ ԻՍՐԱՅԷԼԻ

Ապպաս մինչեւ Հինգշաբթի օր (վաղը) ժամանակ ունի նոր կառավարութիւնը կազմելու համար, թէեւ ըստ օրինի, ժամանակամիջոցը կրնայ 2 շաբթ երկարաձգուի:

Պաղեստինեան ղեկավարութեան աղբիւրներ յայտնած են, թէ ան ղեկավարութիւններ կը դիմագրուէ՝ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի հետ կառավարութեան կազմին գծով տարակարծութիւններու պատճառով:

Անոնք ըսած են, թէ Ապպաս նոյնիսկ սպառնացած է հրաժարիլ, որովհետեւ Արաֆատ կ'ընդդիմանայ իր իսկ նշանակած նախարարներու փոխարինումին, սակայն անոնք շեշտած են, թէ իրենց կարծիքով սպառնալիքը սակարկութեան միջոց մըն է:

Մինչ այդ, Իսրայէլի գաղտնի սպասարկութեանց պետ գորավար Ահարոն Չէյլի երէկ յայտնած է, թէ Ապպաս Միջին Արեւելքի ուղեգիծին անմիջական գործադրութեամբ չէ հետաքրքրուած:

Ան ըսած է, թէ Ապպաս գիտէ, թէ որոշ ժամանակ մը անհրաժեշտ է պաղեստինեան «ահաբեկչական» կազմակերպութիւնները սանձելու համար:

ՊԱՂՈՒԹ ԵՒ ՄԵՐԺԱԾ Է ՓԱՍՏԱԹՈՒԴՈ ՍԸ ԿԸԵԼ

Միւս կողմէ, Իսրայէլացի ոստիկան մը, որ վկայութիւն կու տար Մարտուան Պարզութիւն ղատավարութեան ընթացքին, երէկ յայտնած է, թէ Ֆաթհի ձեռնարկուող ղեկավարը մերժած է ստորագրել գաղտնի սպասարկութեանց կողմէ պատրաստուած յայտարարութիւն մը, որ զայն կ'ամբաստանէր «ահաբեկչական» գործունէութեան մեղսակցութեամբ:

Այդ յայտարարութիւնը պատրաստուած է

հիմնուելով պաղեստինցի այլ արգելափակեալներու խոստովանութեանց եւ Շին Պէթի գաղտնի տեղեկագիրներու վրայ:

Ապպաս ըսած է. «Կը մերժեմ ընդունիլ իմ մասին քննութիւն տանելու ձեռնարկները»:

Պարզութի յուլիսին պահած է դատարանին մէջ մինչ դատաւորը դատախազին հետ վիճաբանած է այն հարցին շուրջ, թէ չկնքուած փաստաթուղթը ընդունելի է: Դատաւորը ի վերջոյ վճռած է, թէ ընդունելի է:

Միւս կողմէ, Իսրայէլեան բանակը երէկ յայտնած է, թէ Երկուշաբթի գիշեր հետապնդուած 5 պաղեստինցիներ ձերբակալուած են Այսրյորդանի մէջ:

(ԱՅՓ)

ԹՈՔԱՏԱՊԻ ԶՈՅԵՐՈՒՆ ԹԻՐ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Մինչ մահացու թոքատապը կը շարունակէ նոր պոհեր խլել (երէկ պոհերու թիւը շուրջ 105ի հասած է), Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան մասնագէտներ եւ այլ գործակալութիւններ յայտնած են, թէ ՍԱՐՍի ամէնէն հաւանական պատճառը քորոնավիրուսն է, որ նաեւ սովորական հարբուխ կը պատճառէ:

ՍԱԿի մասնագէտներ երէկ ւարտած են Չինաստանի Հարաւային Կուանկոտնկ նահանգ վեցօրեայ իրենց այցելութիւնը:

Կուանկոտնկի մէջ, ուր հիւանդութիւնը առաջին անգամ յայտնուած է, առողջապահութեան մարդի բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնած է, թէ նահանգին մէջ ՍԱՐՍ հակակշիռի տակ առնելու ճիգերը յաջողած են եւ վարակումի համեմատութիւնները նուազած:

Մինչ այդ, հիւանդութեան առաջին պարագայ յայտնուած է Ափրիկէի մէջ: Հարաւային ափրիկէցի մարդ մը հիւանդացած է Հոնկ Բոնկ այցելութեան մը վերադարձին:

Հոնկ Բոնկի մէջ առողջապահութեան մարդի պաշտօնատարներ յայտնած են, թէ ուտիճներ կրնան բնակարանային համայնքի մէջ հիւանդութեան չափազանց արագ տարածումը պատճառած ըլլալ:

Հոնկ Բոնկի առողջապահութեան իշխանութիւնները երէկ հաղորդած են, թէ 2 այլ անձեր պոհ գացած են հիւանդութեան, պոհերու թիւը 25ի բարձրացելով: Անոնք նաեւ ըսած են, թէ 45 նոր պարագաներ արձանագրուած են, վարակուածներու թիւը 928ի բարձրացելով:

Շրնելի մէջ, Ա. Հ. Կազմակերպութեան մէկ բանբերը յայտնած է, թէ Հոնկ Բոնկի իշխանութիւնները ունին կասկածներ, թէ ժահրը կրնայ կոյուղիներու եւ արտաքնոցներու ձամբով տարածուիլ:

Ուաշինգթոնի մէջ, ամերիկացի բարձրաստիճան մասնագէտ մը Երկուշաբթի օր Բոնկը հիւանդութեան մէջ, թէ հետպիտէտէ ավելի փաստեր կան, թէ ՍԱՐՍի պատճառը քորոնավիրուսն է, որ կրնայ անասուններէ մարդոց փոխանցուած ըլլալ:

(ԱՅՓ)

ԱՅՍՈՐ ՎԻՓԷՆ - ՍԹՐՕ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ
ՖՐԱՆՍԱ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԲՐԻՏԱՆԻԱՅԷՆ

ՓՄՐԻՉ, 8 (ԱՅՓ).- Ֆրանսա լուսաբանութիւն կը պահանջէ Բրիտանիայէն, որուն առեւտուրի նախարարը ամբաստանած էր, թէ ֆրանսական եւ ոռուսական ընկերութիւններ խախտած են Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի տնտեսական պատժամիջոցները:

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Ֆրանսուա Ռիսսօ ըսաւ, որ բրիտանացի նախարարին յայտարարութիւնը անընդունելի է: Ան ակնարկեց, որ Ֆրանսա բացատրութիւն կը պահանջէ իշխան ամբաստանութիւններուն մասին:

Բրիտանացի նախարարը ըսած էր, որ եթէ ինք նախարար մը ըլլար Իրաքի մէջ նշանակուելիք նոր կառավարութեան մէջ, դժուար թէ վերաշինութեան աշխատանքին մէջ նկատի ունենար ընկերութիւններ, որոնք խախտած են ՄԱԿի պատժամիջոցները եւ պարտաւոր կանգնած Սատուան Հիւսէյնի իշխանութեան: Նախարարը կ'ակնարկէր ոռուսական եւ ֆրանսական ընկերութիւններուն:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք Տը Վիլիֆէն Չորեքշաբթի օր (այսօր) հանդիպում պիտի ունենայ բրիտանացի պաշտօնակիցին՝ ձեք Սթրոյի հետ: Կը նախատեսուի, որ այլ հարցերու կարգին, արժարձուի նաեւ առեւտուրի նախարարին կատարած յայտարարութիւնը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐ՝ ԶԵԶԵՆՈՅՑ ՄԷՋ

Չեչեմիոյ մայրաքաղաք Կրոզնի մէջ ռուս 3 զինուորներ սպանուած են երէկ ակամի մը պայթումին հետեւանքով, Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան կապուած պատուիրակներու ժամանումէն քանի մը ժամ առաջ՝ տեղացի ղեկավարներու հետ տեսակցութեան համար:

5 կամ 6 այլ անձեր մահել վիրավորուած են պայթումին հետեւանքով:

Երկօրեայ իր այցելութեան ընթացքին, պատուիրակները տեսակցութիւններ պիտի ունենան ռուսաւետ չեչեմ վարչակարգի պետ Ահմետ Քատիրովի եւ այլ պաշտօնատարներու հետ:

Խմբակին քննարկումներուն առաջը պիտի ըլլայ Մարտ 23ի համաժողովը՝ մոր սահմանադրութեան մը գծով: Չեչեմներու սեծամասնութիւնը ընդունած էր սահմանադրութիւնը, որ հանրապետութիւնը կը հաստատէ իբրեւ անբաժան մէկ մասը Դաշնակցային Ռուսիոյ:

(ԱՅՓ)

ՓՈՒԹԻՆ - ՇԻՐԱՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՈՒՐԲԱԹ ՕՐ

Ֆրանսայի եւ Ռուսիոյ նախագահներ ժաք Շիրաք եւ Վլատիմիր Փութին Ուրբաթ օր Մէք Փեթրասպուրկի մէջ ժողով մը պիտի գումարեն, քննարկելու համար իրաքեան պատերազմի վերջին իրադարձութիւնները:

Շիրաք երէկ յայտարարեց նաեւ, որ ՄԱԿի կենսական դերակատարութիւնը անխուսափելի պէտք է ըլլայ յետպատերազմեան Իրաքի մէջ:

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԸ ԱՊՐԵՅԱՒ ՍԵՒ ՕՐ ՄԸ. «ՄԵՂԱԲՈՐ»Ը ԴԱՐՉԵԱԼ ԻՐԱՔՆ Է

ԷՋ 2

ԲՈՒՈՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ...

Շարունակուած Ա. Էջեմ



«Ժագիրա»ի սպանուած թղթակից Թարեք Այլուպի դիակը կը փոխադրուի...

կին մէջ շրջափակուած է ավելի քան 25 թղթակից եւ թէ շրջանը ամբողջ զինուորական գոտիի վերածուած է: Կայանք կոչ Կարմիր Նշանի փութատու թղթակիցներուն ժամանակութեան եւ զանոնք փրկելու երկու կողմէն արձակուող ռումբերէն:

Լրատուական մարզի ներկայացուցիչներուն դէմ բացուած կրակը ընդվզում յառաջացուց աշխարհի տարածքին: Լրագրողներու Միջազգային Ֆետերասիոնը դատապարտեց «Պաղեստին» պանդոկին ուժեղ լրագրողներ կը սպաննեն խափանելու համար իրականութիւնը իրաքի ժողովուրդին նկատեց լրագրողները թիրախ դառնալու պարագան

յները կը շարունակուին: Ամերիկեան աղբիւրներ յայտնեցին, որ օդանավային ուժերու զարկով թիրախ դարձուց կեդրոն մը, ուր թերեւս ներկայ էին Սատտամ Հիւսէյնի ու անոր երկու զակալները: Սատտամի սպանութեան մասին օրերէ ի վեր լուրեր կը հրատարակուին, սակայն ոչ մէկը տակաւին կարելի եղած է հաստատել:

Մինչ ամերիկեան աղբիւրները կը խօսին մեծ յառաջխաղացքի մասին, իրաքի տեղեկատուութեան նախարար Մոհամմատ Սալիտ Սահաֆ վերջին տին հերքեց լուրերը, պնդելով, որ ամերիկեան ուժերը Պաղեստին դուրս են:

Միւս կողմէ, բախում (ԱՅՓ)